

ՀՏԴ 81 `33(479.243)

Լեզվագիտություն
Ռենա Մովսեսյան

**Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի դասախոս
ՋԻՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՈՒՆԵՐԸ և ՆԴԱՆՅ ԻՍԱՍՏԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ԱՐՅԱՆՅԱՆ
ԼԵԶՎԱՍՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Յուրաքանչյուր հանրության լեզվամտածողությունը արտացոլում է նրա կենսագրությունը, աշխարհայացքն ու ճակատագիրը: Ջենքը արցախցու կենսակերպի անբաժանելի մասնիկն է եղել ու կա: Եվ զինատեսակների անվանումները Ղարաբաղի բարբառի բառապաշարի ակտիվ շերտերից մեկն են կազմել, հետևապես՝ իմաստային զարգացումներ դրսևորել: Դրանք արցախյան լեզվամտածողության մեջ զուգորդվում են այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են «կենսապայման», «ուժ, հնարավորություն», «պատիվ», «հերոս» ևն:

Ղարաբաղի բարբառում գործածվող զինանունները ունեն նաև ծագումնաբանական բազմազանություն:

Բանալի բառեր. *Լեզվամտածողություն, աշխարհայացք, Ղարաբաղի բարբառ, զինատեսակների անվանումներ, իմաստային դաշտ, իմաստային զարգացում, ծագումնաբանական բազմազանություն, դասակարգում, բնիկ, փոխառություն:*

*Рена Мовсесян – преподаватель кафедры армянского языка и литературы
университета «Григор Нарекаци»*

**НАЗВАНИЯ ВИДОВ ВООРУЖЕНИЙ И ИХ СМЫСЛОВОЕ РАЗВИТИЕ
В АРЦАХСКОМ ЯЗЫКОВОМ МЫШЛЕНИИ**

Языковое мышление каждого общества отражает его биографию, мировоззрение и судьбу. Оружие было и остается неотъемлемой частью жизни арцахцев. Названия видов вооружений являются одним из активных слоев лексики нагорно-карабахского диалекта и, следовательно, выражают смысловые разнообразия. В языковом мышлении арцахцев они сочетаются с такими понятиями как «жизненные условия», «сила», «возможность», «честь», «герой» и другие.

Названия вооружений, применяемые в карабахском диалекте, имеют также этимологическое многообразие.

Ключевые слова: *языковое мышление, мировоззрение, карабахский диалект, виды вооружений, смысловое поле, смысловое развитие, этимологическое многообразие, классификация, коренные народы, заимствование.*

*Rena Movsesyan. Lecturer, the chair of the Armenian language and Literature
at Grigor Narekatsy University*

**THE NAMES OF WEAPONS AND THEIR SEMANTIC DEVELOPMENT
IN THE ARTSAKH LANGUAGE THINKING**

The language thinking of each society reflects its biography, worldview and destiny. The weapon was and remains as an integral part of the life of the Artsakh people. The names of the types of weapons are one of the active layers of the vocabulary of the Nagorno-Karabakh dialect and, therefore, express semantic diversity. In the language thinking of the Artsakh people they are combined with such concepts as “life conditions”, “power”, “opportunity”, “honor”, “hero” and others.

The names of weapons used in the Karabakh dialect have also etymological diversity.

Key words: *language thinking, world vision, Karabakh dialect, types of weapons, semantic field, semantic development, etymological diversity, classification, native-born people, borrowing.*

Յուրաքանչյուր հանրության լեզվամտածողությունը արտացոլում է նրա կենսագրությունը, աշխարհայացքն ու ճակատագիրը: Արցախի ժողովուրդը միշտ էլ իր ապրելու իրավունքը ստիպված է եղել ձեռք բերել պատերազմելով: Ձենքը արցախցու կենսակերպի անբաժանելի մասնիկն է եղել ու կա: Եվ զինատեսակների անվանումները Ղարաբաղի բարբառի բառապաշարի ակտիվ շերտերից մեկն են կազմել, հետևապես՝ իմաստային զարգացումներ դրսևորել: Գ. Ջահուկյանն իր «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ կատարել է դեռևս հնդեվրոպական նախալեզվի բառապաշարի դասակարգում: Առանձնացված քսաներկու խմբերից քսաներորդը «Ռազմական գործ» խումբն է, որի երկրորդ ենթախումբը զինատեսակների անվանումներ են (նետ, աղեղ, թուր, սուր նն)¹: **Թուր, սուր** բառերը **թոր, սոր**² տարբերակներով Ղարաբաղի բարբառը ժառանգել է հիմք լեզվից, և բարբառում դրանք դրսևորել են իմաստային հետաքրքիր զարգացումներ:

Ղարաբաղի բարբառում նշված խումբը ունի ծագումնաբանական և իմաստային բազմազանություն: Իմաստային հետաքրքիր ծավալումներ են դրսևորել ինչպես բնիկ հայերեն բառերը (թոր, սոր,) այնպես էլ փոխառությունները, հատկապես՝ վաղ շրջանի փոխառությունները, որովհետև որքան երկար «կենսագրություն» ունի բառը, այնքան ընդգրկուն է նրա իմաստային դաշտը:

Վաղ շրջանի զինատեսակների անունների մեծ մասը փոխառված են արևելյան լեզուներից. **դժմժժ** (թրք. kama) - դաշույն, **դըրմա** (թրք. gurma)-փամփուշտի արճճե մանր գնդակներ, **լժժլա** (պրսկ. lila)-հրազենի փող, **թօփ**(թրք.top)-հրանոթ, **թժժլժժլժժ**-(աղբ. təkli) -միափողանի հրացան, **թափանչա** (թրք. tabanca)-ատրճանակ, **դօշալժժլա** (թրք.göşəl) -երկփողանի հրացան, **թըվժնգ/թժրփժնգ/թիրփժնգ** (պրսկ.tofang)- երկար փողով ձեռքի հրազեն հրացան, **չախմախ** (պրսկ., թուրք. çakmak)-ձեռքի հրազենի հարվածող մեխանիզմի մաս, **բարուր** (թրք.barut) – վառոդ, **խանչալ** (արաբ. xanjar, xānčār)-դաշույն՝ երկսայրի սրածայր փոքր թուր, **գժժլլժժ** (պրսկ.gulle) - հրազենի գնդակ, **դայանթորդուրլում**-հնաճ հրացան, որի վառոդը և արճիճը կրակելուց հետո լցնում էին փողի մեջ, **խըշտիկ** (պրսկ.xišt)-նիզակ, գեղարդ նն:

Ուշ շրջանի զինատեսակների անունների մեծ մասը բարբառը փոխառել է ռուսերենից, որոնք հաճախ ժողովրդի մեջ տարածվել են հնչյունական պատկերի աղավաղմամբ: Օրինակ՝ **նագան** (ռուս. наган)- ատրճանակի տեսակ, **ավտամատ** (ռուս. автомат)-ինքնաձիգ, **մինա** (ռուս. мина)-ական, **պըլիմօտ**(ռուս.- пулемёт)-գնդացիք, նոնականետ, **փըստոն** (ռուս. пистон)-փամփուշտի հրապատիճ, **կատրեչ** (ռուս. картеч)-արճճե, մեծ փամփուշտ, **պատրոն** (ռուս. патрон)-փամփուշտ, **պատրոնդաշ** (ռուս. патрондаш)-փամփշտակալ, **պատրոնիկ**(ռուս.патронник)-հրազենի փողանցքի այն մասը, ուր տեղադրում են փամփուշտները, **ալազան** (ռուս. алазан)-հրթիռ, **շտիկնօժ** (ռուս. штикнож)- սվին դանակ նն: Վերջին շրջանում, մանավանդ՝ Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո շրջանավորում են նաև **ամերչ, իսկանդեր, բեզալիտոնիկ, սպայկ** և այլ անվանումներ, ավելին՝ դրանք բարբառում արդեն կիրառվում են փոխաբերական և դարձվածային իմաստներով: Օրինակ՝ **անիմաստ գործով զբաղվող մարդուն** անվանում են **բեզալիտոնիկու պիլոտնիկ, ամերչ** կամ **իսկանդեր** բառերը գործածում են **մեծ հնարավորություններ ունեցող** իմաստով: Հայտնի է, որ Ղարաբաղի բարբառի խորհրդային և հետխորհրդային տարիների կատարած փոխառությունները մեծ մասամբ ռուսերենից են: Եվ եթե մնացած բառիմաստային խմբերի մեջ շատ են միջնորդավորված փոխառությունները, ապա զինատեսակների անունները հիմնականում անմիջական փոխառություն են ռուսերենից՝ հայտնի պատճառով. այդ զինատեսակները ևս արտադրվում են Ռուսաստանում:

Ճակատագրի բերումով զենքը արցախցու համար պաշտպանվելու, պարբերաբար կրկնվող պատերազմի սպառնալիքներին դիմագրավելու միջոց է եղել, դարեր շարունակ զենք կրելը կենսակերպ է եղել մեզ համար և զենքի հանդեպ վերաբերմունքը երբեմն պաշտամունքի է հասել:

¹ Տես Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 221:

² Բոլոր բարբառային բառերի բացատրությունը տվել ենք ըստ Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանի» (Արցախի Պետական Համալսարան, Երևան, 2013, 846 էջ)՝ անհրաժեշտության դեպքում համեմատելով «Հայոց լեզվի բարբառային բառարանի» (ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտ, հհ 1-5) հետ:

Դա է պատճառը, որ արցախյան լեզվամտածողությանը այն «սպանող, ոչնչացնող միջոց» իմաստից զատ, ունի նաև հետևյալ ընկալումները.

1. *Ուժ, հնարավորություն, հերոս*. օրինակ՝ **թորը այ է կըտրել, ծէխ՝ էլ-ուժեղ, ազդեցիկ լինել, թորէն համ առաշկը կըտրել, համ քամակը-ուժեղ, ազդեցիկ լինել, թորէն մայր քրցիլ-իրեն ենթարկեցնել, թորէն սօր վախտը-ուժերի, իշխանության ծաղկուն շրջանում, թորը կըտրել-խոսքը անցնել, ամեն ցանկություն կատարել կարողանալ, թորը հինչ վեր կարէ վէ կըտրէ, հացը կըկըտրըրէ-բռնությամբ, ուժով չլուծվող հարցը խաղաղ ճանապարհով կարելի է լուծել, թորը կըտրում ա, ծր՛րքրն ըն թարիփ անում-** գովում են ոչ թե միջոցը, այլ կիրառողին, **թորը սօր-ուժեղ, գորեղ, անէսը երկուկըլխանէ թօր ա-անեժքը գորավոր է, մին ԳՊՊՎՎՎ կըկու ըլբաստրակ վեր քրցիլ-միանգամից շատ հարցեր լուծել, թորէն կըտրըրածը կըլըվանա, լՊՊՊ գվին կըտրըրածը լըվանալ չի-խոսքով հասցրած վիրավորանքը ավելի ծանր է, քան ֆիզիկականը, մինչէվ խանչալը եկավ, լՊՊՊ գուն կըլօխ կըտրըրից-լեզուն զենքից գորեղ է, զէնքը վեր տինիլ-անձնատուր լինել, հացէն կըտրըրածը թորը կըտրըրէլ չի-հյուրասիրությունը զենքից գորավոր է, թվ՞նգը մօտէ յիրա յըս անում, հր՛տէ տրաքում ա՞ նն:** Հետևյալ հանելուկներում թուրը նույնացվում է հերոսի հետ. **Փաղը քընդէցէն, ապանը մաչին կըղէցէն (պատյան և սուր)՞, կամ մըթէն սօն, Դավիթը մաչին քօն (թուր և պատյան)՞:** Հետաքրքրական է, որ վերջին հանելուկը Ղարաբաղի բարբառում ունի երեք տարբերակ, որոնցում թուրը ասոցացվում է մի դեպքում հերոսի Դավիթի, երկրորդ դեպքում՝ մահվան՝ (**Մըթէն սօն, Կահրիկըր մաչին քօն**), երրորդ դեպքում՝ թշնամու հետ (**մըթէն սօն, արաքը մաչին քօն**):

2. *Սպառնալիք, վտանգ*. օրինակ՝ *սպառնալ* իմաստով Ղարաբաղի բարբառում գործածվում են խանչալ քաշիլ, խանչալավ խօւէլ, թափանչա տՊՊՊ սօնէլ, զէնք՝ քաշիլ, թըվ՞նգ՝ քաշիլ-դարձվածները, կամ **թօփէն տըմանալ** նշանակում է *սպառնալիքները հանդուրժել*, իսկ զինատեսակները *վտանգ* իմաստ ունեն հետևյալ միավորներում. **լիգը թըվ՞նգփին տրաքուցան մին մարթ ա վախում, տիրտականը տասը, բարութու վը՛տ կյ՞լ** (վտանգ զգացվել), **թըվանգփին լՊՊՊ լՊՊՊ բիդի տէս տը՛ննալ** (պատերազմի վտանգ զգացվել), **հՊՊՊ լՊՊՊ թօփ տըրաքէ** (չնայած վտանգին) նն:

3 *զինվելու, պայքարի պատրաստ լինելու իմաստ*. գյուլան տաք պահէլ, **բարութը չՊՊ պահէլ-միշտ պատերազմի պատրաստ լինել, թըվ՞նգ կապէլ, թօր-թըվ՞նգ կապէլ, զէնք՝ յօր օնէլ-զինվել նն:**

Ձենքը մեզ համար եղել է **կենսապայման, ապրելու միջոց, ինչը երևում է հետևյալ դարձվածներում. բարութը կըլխէլ-սնանկանալ, կատրէջ կըտըրցընէլ-ամեն ինչից զրկել, հր՛տան ԳՊՊՎՎ քրցիլ-մեկի, մի բանի կարիքը շատ զգալ:**

Մարդկային արժանապատվությունը ամենից վեր դասող մեր նախնիները զենքը կարևորել են սեփական արժանապատվության չափ: Օրինակ՝ **խընչալէն քարը վեր ըղնէլ** նշանակում է *արժապատվությունը վիրավորվել:*

Ձենքը, ինչպես երեխան, արցախցու համար պաշտամունք է, և ահա *զեղեցիկ, ամրակազմ երեխային* արցախցին անվանում է **թօփու գուլլա**, իսկ *խանձարուրի մեջ փաթաթված երեխային*, համեմատելով հրացանի կօթի հետ, անվանում է **դօնդալ**: Հրացանի գնդակը երեխայի հետ է համեմատվում նաև հետևյալ հանելուկում. *Մարը կ՛օտոաց, խօխան փախավ (հրացան և գնդակ):*

Մարդկային բնավորության մի շարք գծեր և հոգեվիճակներ ևս նկարագրվում են զինատեսակների միջոցով. Օրինակ՝ **բարութ** բառը գործածվում է նաև *զայրացկոտ փոխաբերական իմաստով*, իսկ **բարութ կըտըրէլ-բորբորվել, զայրանալ**, կամ *շատ արագ վազողին* ասում են **հր՛տան ԳՊՊՎՎ չի հըսնէլ, թօփերը սարել** նշանակում է *լարվել, բորբորվել*: Ձենքը ունի նաև *ցավ, կակիծ* իմաստային կիրառություն, օրինակ՝ **երված, տըրտակված Շուշին, իմ սը՛րտս խըրած թօր ա**⁵:

Բառապաշարի ուսումնասիրվող խումբը բոլոր ժամանակներում էլ այնքան հաճախական կիրառություն է ունեցել, որ դրանց միջոցով նկարագրվել են զենքի հետ բոլորովին կապ չունեցող առարկաներ՝ այլաբանորեն կիրառելով զինատեսակների անունները: Դա հատկապես երևում է

¹ Բոլոր բարբառային դարձվածների բացատրությունը տվել ենք ըստ Ա. Մարգարյանի, Շ.

Մինասյանի «Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարանի» (Երևան, 2017):

² Մարգարյան Ա., Արցախի բանահյուսություն, Երևան, 2015, էջ 468:

³ Նույն տեղում, էջ 602:

⁴ Նույն տեղում, էջ 586:

⁵ Մարգարյան Ա., Արցախի բանահյուսություն, Երևան, 2015, էջ 36:

հանելուկներում: Օրինակ՝ Տըսներկու սաղաթ մին խըշտիկ օնին, մին թօփ (*ժամացույց սլաքներով*)¹: ՊՁՁլՁՁր ա, ԳՁՁլլա չի, սիպտակ ա, պեմբակ չի (*կարկուտ*)²: Մըսէ լՁՁլա, ըրկաթէ ԳՁՁլլա (*քյաբաբ*)³Վըհէ լՁՁլա, մըսէ ԳՁՁլլա (*բույն և մուկ*)⁴: Մին թօր օնիմ՝ վէչ ըրկաթէ, վէչ պուղվատէ, վէչ էլ դամիրչու ծէրք նի յէկած(*ժանիք*)⁵:Թօրու նման կըտրում ա, կըրակու նրման պըծիպածի անում, ամալ ա կ'ամ թուխպան, մըհնում վըհումը(*կայծակ*)⁶:

Ինչպես ցույց են տալիս օրինակները զենքի անվանումները դրական իմաստով ունեն բազմաթիվ կիրառություններ, սակայն *սպանող, ոչնչացնող միջոց* իմաստով ևս կազմել են մի շարք դարձվածներ: Ինչպես՝ *ԳՁՁլլաթակ անէլ- գնդակոծել, Գուլլաթակ տըհնալ-գնդակոծվել, ԳՁՁլլան նի կալ- հրագենի գնդակով վիրավորվել, ԳՁՁլլըբօրան անէլ-գնդակների տարափ տեղալ, Գուլլըխարավ անէլ-գնդակով սպանել, Գուլլու ըռըէխ ըղնէլ-գոհվելու վտանգի ենթարկվել, Գուլլու փայ տըհնալ-գնդակահարվել, Թօրէն ըռըէխը տալ, Թօրէն տակը տալ-թրով հարվածել, Թօրան արուն կաթէլ-արյունարբու լինէլ* ևն:

Այսօր էլ ոչ կայուն խաղաղության պայմաններում զենքը մեր կյանքի անբաժանելի ուղեկիցն է, և նոր զինատեսակների անունները շարունակում են մտնել Ղարաբաղի բարբառի ակտիվ բառապաշարը:

¹ Նույն տեղում, էջ 601:

² Նույն տեղում, էջ 595:

³ Նույն տեղում, էջ 586:

⁴ Նույն տեղում, էջ 598:

⁵ Նույն տեղում, էջ 587

⁶ Նույն տեղում, էջ 574